

**ՀՀ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ՏՆՏԵՍԱԿԱՆ ՀԱՐԱԲԵՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ՎԻՃԱԿԻ
ՍՈՑԻԱԼԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳՐԻՉՆԵՐԸ**

Հասնիկ ՀԱՄԱՐՁՈՒՄՅԱՆ


ՀՊՏՀ Հակաճգնաժամային և զբոսաշրջության
կառավարման ամբիոնի ասիստենտ

Բանալի բառեր. հասարակական-տնտեսական հարաբերություններ,
արտագաղթ, գործազրկություն, աղքատություն

ՀՀ հասարակական-տնտեսական հարաբերությունների վիճակի վերլուծությունը պահանջում է նախ դիտարկել այնպիսի սոցիալական բնութագրիչներ, ինչպիսիք են, մասնավորապես՝ բնակչության տեղաշարժը (միգրացիա, արտագաղթ), գործազրկությունը, աղքատությունը: Սրանք այն փոփոխական գործոններն են, որոնք իրենց անմիջական ազդեցությունն են ունենում թե՛ հասարակական լարվածության ձևավորման և թե՛ տնտեսական զարգացման գործընթացների վրա: Այս առումով, դիտարկենք բնակչության թվաքանակի վերաբերյալ առկա տվյալները, որի փոփոխություններն առավել տեսանելի կդարձնեն արտագաղթի իրական չափերը, այնուհետև, բացահայտելով արտագաղթի պատճառները, կանդրադառնանք գործազրկության և աղքատության ցուցանիշներին: Հասարակական-տնտեսական հարաբերությունների լարվածության աստիճանի բացահայտման տեսանկյունից, գործազրկության և աղքատության ցուցանիշները անհրաժեշտ է դիտարկել դրանց ծայրահեղ մակարդակների հարաբերակցությամբ:

Մինչև 2004 թ. բնակչության թվի ընթացիկ գնահատականը տրվել է մինչև 2001 թ. անցկացված մարդահամարի արդյունքների հիման վրա, որին յուրաքանչյուր տարի գումարվել է տվյալ տարածքում ծնվածների և եկողների թիվն ու հանվել՝ մահացածների և այդ տարածքից մեկնածների թիվը: Սակայն 2005 թվականից սկսած՝ բնակչության ընթացիկ թիվը ճշգրտվել է՝ կատարելով հետադարձ վերահաշվարկ՝ հիմնված վերջին (2001թ.) մարդահամարի տվյալների վրա: Արդյունքում, միայն 2001թ. վերահաշվարկի արդյունքում ՀՀ բնակչությունը կրճատվել է 587.1 հազար մարդով:

Առանց 2001 թվականի մարդահամարի տվյալներով ճշգրտման՝ 1995 - 2013 թթ. ընթացքում ՀՀ բնակչությունը նվազել է 726.6 հազար մարդով, իսկ ճշգրտված տվյալներով՝ 233.4 հազար մարդով: Համաշխարհային բանկի տվյալներով՝ ՀՀ բնակչությունը նշված ժամանակահատվածում նվազել է 249 հազար մարդով: Բնակչության թվին առնչվող ցուցանիշներից ՀՀ-ում առաջնային է համարվում միգրացիոն հոսքերի գնահատումը:



Գծապատկեր 1. Բնակչության թվաքանակը, հազ. մարդ


Ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների՝ 1995 - 2013 թթ. ընթացքում ՀՀ-ից արտագաղթել է 195.9 հազար մարդ, ըստ Տարածքային կառավարման նախարարու-թյան միգրացիոն պետական ծառայու-թյան տվյալների, միայն 2000 - 2013 թթ. ընթացքում արտագաղթել է 310.2 հազար մարդ, իսկ 2009 - 2012 թթ. տվյալների հետագա ճշգրտումների արդյունքում՝ 297.4 հազար մարդ, սա-կայն միայն ՌԴ-ում 1997 - 2013 թթ. ընթացքում գրանցվել է 307.9 հազար հայ: Ըստ Համաշխարհային բանկի տվյալների՝ ՀՀ-ում միգրացիոն հոսքերը 1995 - 2010 թթ. ընթացքում կազմել են 2072.6 հազար մարդ: Միայն վերջին չորս տարիների ընթացքում 5.7 հազար մարդ ստացել է ԱՄՆ մշտական բնա-կության իրավունք՝ “Գրին քարդ”: Ըստ 2013-ի ՀՀ սահմանահատումների վե-րաբերյալ Հայաստանի ժողովրդագրական ժողովածուի տեղեկատվության՝ ՀՀ-ից ԱՄՆ և ԱՄՆ-ից ՀՀ սահմանահատումների տարբերությունը 2010 թ. կազմում է 74 մարդ, 2011 թ.՝ 353 մարդ, 2012 թ.՝ 362 մարդ, իսկ 2013 թ.՝ -63: Սակայն <http://greencardservice.org/> կայքի տրամադրած տեղեկատվության համաձայն՝ 2011 թ-ին “Գրին քարդ” են ստացել 1268 ՀՀ քաղաքացի, 2012-ին՝ 998 , 2013-ին՝ 1174 , իսկ 2014 թ.՝ արդեն 2221 մարդ:

Ըստ Աշխատանքի միջազգային կազմակերպության հետազոտության՝ 1990-ական թվականներին Հայաստանի Հանրապետությունը լքել է 800 - 1000 հազար մարդ: 2002 - 2007 թթ. ընթացքում աշխատանքային միգրանտ-ների 96%-ը, իսկ մշտական միգրանտների 71%-ը մեկնել են ՌԴ: 2005 - 2006 թթ. տնային տնտեսությունների շրջա-նում անցկացված հետազոտության

արդյունքները վկայել են 96 - 122 հազար աշխատանքային միգրանտների մասին: 2013 թ. հրապարակված ՀՀ ԱԿԾ վիճակագրական վերլուծական զեկույցում արձանագրված է, որ 2009 - 2012 թթ. 29 հազար մարդ մեկնել է ՀՀ-ից և այլևս չի վերադարձել: 2014 թ. հրապարակված նույն զեկույցով՝ 2010 - 2013 թթ. 3 ամիս և ավելի տևողությամբ մեկնած և 2013 թ. դրությամբ դեռևս չվերադարձածների թիվը կազմել է շուրջ 25,7 հազար մարդ: Ընդ որում, ըստ ՀՀ անձնագրային վարչության տվյալների, 2008 - 2012 թթ. ընթացքում ՀՀ քաղաքացիությունից հրաժարվել է 2879 մարդ:

Հաշվի առնելով առկա վիճակագրական տվյալներով ՀՀ միգրանտների մոտ 70%-ի աշխատանքային միգրանտ լինելու փաստը, ակնհայտ է, որ գործազրկությունը արտագաղթի դրդող գործոններից առավել էականն է:

Գործազուրկ են համարվում աշխատունակ տարիքի այն անձինք, որոնք հետազոտության շաբաթվա ընթացքում չեն ունեցել աշխատանք կամ եկամտաբեր զբաղմունք, հետազոտությանը նախորդող 4 շաբաթների ընթացքում ակտիվորեն փնտրել են աշխատանք, և հարմար աշխատանքի դեպքում պատրաստ են եղել անմիջապես (հաջորդ երկու շաբաթվա ընթացքում) անցնել աշխատանքի: Արտագաղթի և գործազրկության միտումների միջև կապը առավել ակնհայտ է գծապատկերում:




Գծապատկեր 2. Էմիգրացիան և գործազրկության մակարդակը ՀՀ-ում

Ըստ “Բնակչության զբաղվածության և գործազրկության դեպքում սոցիալական պաշտպանության” մասին ՀՀ օրենքի 7-րդ հոդվածի և ԱԿԾ

տեղեկագրերում (մասնավորապես՝ տարեգրքում) կիրառվող մեթոդաբանության՝ գործազուրկ ճանաչվելու համար, բացի վերոնշյալ պայմաններից, անձը չպետք է նաև ստանա ՀՀ օրենսդրությամբ սահմանված կենսաթոշակ (բացառությամբ՝ կերակրողին կորցնելու դեպքում տրամադրվող կենսաթոշակի) և պետք է գրանցված լինի Ջբաղվածության պետական ծառայությունում:

Դիտարկենք զբաղված և գործազուրկ, այսինքն՝ տնտեսապես ակտիվ բնակչության բաշխումն ըստ մարզերի՝ համաձայն գործազրկության առաջին՝ ԱՄԿ մեթոդաբանության սահմանման: ՀՀ Աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարության «Ջբաղվածության պե տական ծառայություն» գործակալության 2010թ. հրապարակած՝ «Իրական գործազրկության մակարդակը Հայաստանում. Տնային տնտեսությունների հետազոտության արդյունքների վերլուծություն» հետազոտությամբ բացահայտվել է, որ աշխատանք չունեցողների միայն 2.6 տոկոսն է գրանցված Ջբաղվածության պետական ծառայությունում:




Գծապատկեր 3. Ջբաղվածության պետական ծառայությունում գրանցված և չգրանցված չաշխատող անձինք (տոկոս՝ ընդամենը աշխատանք չունեցողների մեջ)

Իսկ 2012 թվականին կատարած աշխատանքների մասին հաշվետվությունում արձանագրվել են հետևյալ արդյունքները. 2012 թ. դեկտեմբերի 31-ի դրությամբ, զբաղվածների թվի աճով պայմանավորված, հաշվառված աշխատանք փնտրողների թիվը տարե-սկզբի նկատմամբ նվազել է 11.9%-ով և

կազմել է 72043 մարդ, գործազուրկի կարգավիճակ ստացածների թիվը նվազել է 10.5%-ով և կազմել է 62171 մարդ:

Գործազրկության ծայրահեղ մակարդակը գնահատվում է 8-10%: Գծապատկեր 4-ում ներկայացված է ՀՀ գործազրկության մակարդակի փոփոխությունը՝ կրիտիկական մակարդակի համեմատությամբ: Գծապատկերից ակնհայտ է, որ գործազրկության մակարդակը, ըստ ՀՀ ԱՎԾ տվյալների, կրիտիկական սահմանագծից ցածր է եղել միայն 1995 - 1996, 1998, 2003 - 2009 թթ.: 2010 թ. սկսած այն գերազանցել է կրիտիկական սահմանը միջինը 1.8 անգամ: Գործազրկության առավել ցածր մակարդակը 1995 - 2013 թթ. ընթացքում գրանցվել է 2008թ.՝ 6.3, իսկ առավել բարձր մակարդակը՝ 2010 թ.՝ 19: Սակայն, հաշվի առնելով 2008թ-ից ՀՀ ԱՎԾ մեթոդաբանության փոփոխությունը և համապատասխանեցումը ԱՄԿ մեթոդաբանությանը, ներկայացված է նաև ԱՄԿ մեթոդաբանությամբ հաշվարկված գործազրկության մակարդակը 1995-2013 թթ.: Ըստ վերջինիս տվյալների՝ 1995 թ-ից ՀՀ-ում գործազրկության մակարդակը գերազանցել է կրիտիկական սահմանը միջինը 2.3 անգամ: Ընդ որում, նվազագույն արժեքը գրանցվել է 2013՝ 16.2, իսկ առավելագույնը՝ 2001 թվականին՝ 35.9:




Գծապատկեր 4. Գործազրկության մակարդակը

Գործազրկության իրական և պաշտոնական ցուցանիշների տարբերությունը հաճախ պատճառ է հասարակական լարվածության առավել ազդեցիկ գործոններից մեկի՝ աղքատության հիմնախնդրի համար:

Աղքատ են գնահատվել այն անձինք, ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության վերին ընդհանուր գծից, իսկ ծայրահեղ աղքատ կամ թերսնված՝ ում սպառումը մեկ չափահաս անձի հաշվով ցածր է եղել աղքատության պարենային գծից:

Նախ նշենք, որ 1995, 1997-98 և 2000 թթ. համար վիճակագրական տվյալները բացակայում են: ՀՀ աղքատության ցուցանիշների ուսումնասիրությունը ցույց է տալիս, որ ներկայացված 15 տարիներից 9-ի ընթացքում աղքատության գիծն ավելի բարձր է եղել տնային տնտեսությունների մեկ շնչին բաժին ընկնող միջին եկամտից: 1996 - 2001 թթ. աղքատության գիծը սահմանվել է մեկ շնչին բաժին ընկնող եկամտի միջինը 11%-ի չափով: Սակայն եթե այս ցուցանիշներին զուգընթաց դիտարկենք նաև աղքատության մա-կար-դակը, ապա կնկատենք, որ այդ տարիներին այն բարձր է եղել 50-ից:


Ընդ որում, այս տարիների համար հատկանշական է նաև այն, որ աղքատների և շատ աղքատների եկամուտների տարբերությունը չնչին է՝ միջինը 425.6 դրամ, սակայն 2001 թ. արդեն շատ աղքատ բնակչության եկամուտները կազմել են աղքատ բնակչության եկամտի մոտ 39%-ը և տնային տնտեսությունների մեկ շնչին բաժին ընկնող միջին եկամտի 4.5%-ը: 2002 - 2007 թթ. աղքատության գիծն ավելի բարձր է եղել տնային տնտեսությունների մեկ շնչին բաժին ընկնող միջին եկամտից՝ միջինը 18%-ով, ընդ որում, առավելագույնը այս միջակայքում և հետագա տարիներին եղել է 2004 թ., երբ աղքատության գիծը գերազանցել է եկամուտները 34%-ով:



Գծապատկեր 5. ՀՀ բնակչության աղքատության ցուցանիշները

Սակայն այս և հետագա տարիների ընթացքում աղքատ և շատ աղքատ բնակչության եկամուտների տարբերությունը կազմել է միջինը 36%: 2001 - 2007 թթ. աղքատության մակարդակը նվազման միտում է գրանցել՝ 50.9-ից հասնելով մինչև 25%-ի: 2008 թ. բնակչության մեկ շնչին բաժին ընկնող եկամուտը գերազանցել է աղքատության գիծը 1678 դրամով կամ 6.3%-ով, սակայն 2009 - 2011 թթ. այն կրկին ցածր է եղել աղքատության գծից միջինը 2266 դրամով, կամ 7.4%-ով: Ինչ վերաբերում է ծայրահեղ աղքատության

գծին, ապա նշենք, որ 2002 - 2004 թթ. աղքատների եկամտի նկատմամբ այն նվազել է տարեկան միջինը 2%-ով, սակայն այնուհետև աճի միտում է ունեցել տարեկան միջինը 1%-ով: Տնային տնտեսությունների եկամտի մեջ դրա տեսակարար կշիռը 2004 թ-ից սկսած նվազել է տարեկան միջինը 4.6%-ով: Բացառություն է կազմել միայն 2011 թ., երբ ցուցանիշն աճել է 1.6%-ով: Աղքատության մակարդակը այս տարիներին նվազման միտում ունի, բացառություն են 2008-2010 թթ. տնտեսական ճգնաժամային տարիները: 2010թ. համեմատությամբ 2012 թ. փոքր-ինչ կրճատվել են աղքատության ցուցանիշները, սակայն դեռ չեն վերականգնվել 2008-ի տվյալները: 2011 թ. դրությամբ բնակչության ավելի քան 1/3-ը աղքատ է (35%) և կազմում է մոտ 1.1 մլն մարդ՝ հաշվառված բնակչությունից, որի 19.9%-ը՝ շատ աղքատ, իսկ 3.7%-ը՝ ծայրահեղ աղքատ: Միայն 2009 - 2011 թթ. 250 հազ. մարդ աղքատ են դարձել, 240 հազ. մարդ՝ շատ աղքատ, իսկ 70 հազ. մարդ՝ ծայրահեղ աղքատ: 2011 թ. դրությամբ ծայրահեղ աղքատների թիվը հաշվարկվել է 120 հազար մարդ: 2012 թ. աղքատության մակարդակը նվազել է 2.6 կետով կամ 7.4%-ով: 2013 թ. դրությամբ, 2012-ի համեմատությամբ, աղքատության ցուցանիշը բարելավվել է 0.4 կետով կամ 1.2%-ով:



Գծապատկեր 6. Աղքատության մակարդակը

Աղքատության ծայրահեղ ցուցանիշ է համարվում 10 տոկոսը, ընդ որում՝ ենթադրվում է, որ պարենով ապահովված պետք է լինեն բոլորը: Ինչ-պես նկատում ենք վերոբերյալ ցուցանիշներից, աղքատությունը Հայաստանում գերազանցում է ծայրահեղ ցուցանիշը 3.5 անգամ, ընդ որում, բնակչության մոտ 4%-ը չեն ստանում պարենի նվա-զագույն չափաբաժինը: ՀՀ-ում աղքատության մակարդակը 1995 - 2013 թթ. երբևէ չի նվազել մինչև աղքատության կրիտիկական սահման: Աղքատության ամենացածր մակարդակը գրանցվել է 2007 թ.՝ 25, իսկ առավելագույնը՝ 1999 թ.՝ 55:

Այսպիսով, ՀՀ հասարակական-տնտեսական հարաբերությունների առկա վիճակի բնութագրիչները ակնհայտ գերազանցում են ծայրահեղ ցուցանիշները, ինչը ենթադրում է այդ հարաբերությունների ճգնաժամային փուլում գտնվելը: Հասարակական-տնտեսական հարաբերությունների սոցիալական բնութագրիչների նման ցուցանիշների երկարատև պահպանումը հղի է հասարակական վերափոխումների միտումներով:

Հասմիկ ՀԱՄԲԱՐԶՈՒՄՅԱՆ

ՀՀ հասարակական-տնտեսական հարաբերությունների վիճակի սոցիալական բնութագրիչները

Բանալի բառեր. արտագաղթ, գործազրկություն, աղքատություն

ՀՀ հասարակական-տնտեսական հարաբերությունների վիճակի ուսումնասիրությունը դիտարկելով զարգացման համատեքստում, անհրաժեշտություն է առաջանում քննարկել այն սոցիալ-տնտեսական բնութագրիչները, որոնք պայմանավորում են հասարակական-տնտեսական կառուցվածքի վերափոխումները՝ ձևավորելով ճգնաժամային իրավիճակ: Հոդվածում առանձնացված են այդ բնութագրիչներից առավել էականները:

Асмик АМБАРЦУМЯН

Социальные детерминанты общественно-экономических отношений в РА

Ключевые слова: экономические отношения, эмиграция, безработица, бедность

Рассматривая состояние общественно-экономических отношений в РА в контексте развития, возникает проблема изучения тех социально-экономических детерминантов, которые обуславливают изменение структуры этих отношений и являются предпосылкой формирования кризисной ситуации. В статье рассмотрены наиболее существенные из этих факторов.

Hasmik HAMBARDZUMYAN

The social determinants of socio-economic relations in the Republic of Armenia

Key words: socio-economic relations, emigration, unemployment, poverty

The consideration of the condition of socio-economic relations in RA is required to find out the main determinants that are cause structural changes and crisis formation. In the article are discussed the most impactful ones.